ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

N 17/17.4/44305-2024 «23» 12 2024թ.

«ԳԱԳ-ՄԱՐԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ՄՈՒՐԱԴ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ
(Հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Վեդի, Կասյան փողոց 26/9, 16)

Հարգելի պարոն Շահինյան,

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար ցանցային մալուխների ձեռքբերման նպատակով վարչապետի աշխատակազմի և «ԳԱԳ-ՄԱՐԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 24.10.2023թ. կնքվել է «ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/5-4» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը (տվյալ դեպքում՝ « ԳԱԳ-ՄԱՐԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ն) պարտավորվում է քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ցանցային մալուխները (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ցանցային մալուխների մատակարարման ժամկետ է սահմանվել կնքված համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև սեպտեմբերի 30-ը, սակայն մինչ օրս ապրանքը Ընկերության կողմից չի մատակարարվել:

Պայմանագրի 2.1.7 կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը,*** որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ընդ որում, «ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.15 կետի համաձայն՝

- Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը ընտրված մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

- Եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 գանձապետական հաշվեհամարին փոխանցելու համար:

Միաժամանակ հայտնում եմ, որ սույն ծանուցմամբ պատվիրատուն ապահովել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ